



ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ
ԿՅԱՆՔԻ ՇԱՄԱՐ



ԲԺԻՇԿ Մ. Ա. ՄԵՆԻՒԵՍ

ԿՈՂԶԱՑՆԵՆՔ
ԿՈԼԽՈԶՆԻԿԻ

ԲՆԱԿԱՐԱՆՆ

ՈՒ Բ Ա Կ Ը

092135-6

20 JUL 2010

ԿՈՒՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՈՋԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ

Հ Ա Մ Ա Ր

Բժիշկ Մ. Ա. ՄԵՆԻՆԵՍ

614

Մ-61

НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ
ЦЕНТР
КГУ
ОУЛМ КӨТЕРҒАНО

ԱՌՈՂՋԱՑՆԵՆՔ ԿՈՒՆՈՋՆԻԿ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒ ԲԱԿԸ

1949 г.

Վերամշակված հրատարակությունից
քաղցմանց Հ. ՊԱՐՈՆՅԱՆ



ԱԶՈՎ-ՍԵՎՏՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌուսոՎ-Պոն — 1936

0005 JUL 05

3489

28.06.2013

0005 JUL 05



28705-60

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր յերկրամասի կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրացումը, կոլխոզնիկների ազնիվ հարվածային աշխատանքը՝ անվերադարձ կերպով կոլխոզները հասցրել են ունեւոր կյանքի ճանապարհին։ Ստախանովյան շարժումն որեցոր վիթխարի թափով ընդգրկելով արդյունաբերության և տրանսպորտի բանվորական մասսաներին, միաժամանակ և ընդգրկում է առաջավոր կոլխոզնիկներին և սովխոզների բանվորներին։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման, կոլխոզային և սովխոզային դաշտերի բարձր բերքատվության, մոտակա 3—4 տարում 7—8 միլիարդ փուլի հացահատիկ ստանալու համար տարվող պայքարը, կոլխոզների առաջ բացվում է ամեն տեսակ

բարիքներով առատ, հարուստ կյանքի ընդարձակ հեռանկարներ: Կոլխոզները թնակոխել են վոչ միայն հարուստ, այլ և կուլտուրական կյանքի ուղին: Այն խոր տնդունդը, վոր ցարական Ռուսաստանում քաղաքը բաժանում եր գյուղից, խորհրդային սոցիալիստական յերկրում վերացվում ե:

Ռայոնական թերթերն ամեն որ մեզ հայտնում են առաջավոր կոլխոզների այն բոլոր ձեռնարկությունների մասին, վորոնք պայքար են մղում մաքուր, կուլտուրական գյուղ ստեղծելու համար:

Շատ կոլխոզներում կառուցվում են բաղնիքներ, խրճիթ-ընթերցարաններ, դպրոցներ, սարքավորվում են պոմպերով (նասոսներ) բարենորոգված ջրհորներ, ավարտվում են նոր տնտեսական շենքեր և նույնիսկ շինվում են ջրմուղներ:

Մեր յերկրամասի մի շարք ստանիցաներում և գյուղերում արդեն անցկացրված ե ելեկտրական յուսավորություն և ռադիոն թափանցում ե ամենահեռավոր անկյունները:

Այդ նոր կառուցումների կողքին դեռ այնքան շատ հասարակ աշխատանքներ

կան, վորոնք կոլխոզնիկները պետք ե կատարեն իրենց կենցաղն առողջացնելու համար, և վորոնք կյանքում իրագործելու համար վոչ մի ջանք չի պահանջվում:

Այստեղ խոսքը կոլխոզային բնակարանների, բակերի և փողոցների առողջացման, նրանք լրիվ կարգի բերելու մասին ե: Առանց զբան չի կարող լինել վոչ կուլտուրական կյանք և վոչ ել առողջություն:

Կոլխոզնիկը պետք ե իմանա, վոր թե իր առողջությունը և թե իրեն շրջապատող մարդկանց առողջությունը կախված ե այն պայմաններից, վորի մեջ նա ապրում ե: Յեթե կոլխոզնիկները մաքուր են ապրում, մաքուր ոգ են շնչում, առողջարար ջուր են խմում, պարզ ե, վոր նրանք շատ ել առողջ են լինում: Ասում են, վոր ապականված, կեղտոտ բնակարանում փառում են վոչ միայն առարկաները, այլ և մարդիկ: Յեվ այդ շատ ճիշտ ե: Բժիշկներն այդպիսի շատ փաստեր գիտեն, վորոնք հաստատում են այդ կարծիքը:

Բոլոր մեր բնակարանները կարող են մաքուր և առողջ լինել միայն այն ժամանակ, յերբ բակերը և փողոցները նույնպես

մաքուր և սարքի բերված լինեն: Կոլխոզում
բոլոր սները, բակերը յեվ փողոցները մա-
քուր յեվ լիակատար դուրսյան մեջ պահե-
լու ձգտումը՝ դա կուլտուրական գյուղի
համար մղվող պայքարում ամենախոշոր
խնդիրներից մեկն է հանդիսանում:

I. ԲՆԱԿԱՐԱՆԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Գարնանը և ամռանը, յերբ մեծերն ու
փոքրերն իրենց որվա շատ մասն անց են
կացնում դրսում, նրանք իրենց ավելի
առույգ և առողջ են զգում: Այդ հանգա-
մանքը բոլորից առաջ կախված է ոգից,
վորը շնչում է մարդը: Նույնիսկ ամենալավ,
ընդարձակ և մաքուր բնակարանում ողն-
ախալես մաքուր և առողջ չի լինում, ինչ-
պես դրսում:

Իսկ ի՞նչ կարելի չե ասել ախպիսի բնա-
կարանների ոգի մասին, վորտեղ մարդիկ
ապրում են իրար գլխի թափված, և վոր-
տեղ խոհանոցը կպած է բնակատեղին: Խո-
հանոցի գոլորշին և ծուխը, կերակրի ամե-
տեսակ մնացորդները և կեղտոտ դուլլի
մեջ հավաքված ամանեղենի ջրի գոլորշիա-

ցումը թունավորում են բնակարանի ողբ։
Սրան միանում է նաև այն կեղտոտ ողբ,
վորն առաջանում է սալիտակեղեններ լվա-
նալուց, բաւուր չորացնելուց, քրտինքից և
մարդկանց հոտից՝ հատկապես զիշեր ժամա-
հալ։

Նույնիսկ ամենաընդարձակ, մաքուր շեն-
քում ողն ապականվում է մարդկանց շնչա-
ռությունից, վորովհետև մարդը ներշնչելիս
ողբից վերցնում է թխվածիւն և արտաշնչում
ածխաթթու գազ։ Ավելի նեղ, փոքրիկ շեն-
քում ողն եւ ավելի շատ է կեղտոտվում և
առողջության համար վնասակար է դառնում։

Բացի ամեն տեսակ գազերից և գոլորշիա-
ցումներից ողում գտնվում է նաև շատ
փոշի, վորն առաջանում է հատակը մաքրե-
լուց, շորերը թափ տալուց, տնային ամեն
տեսակի աշխատանքներից և այլն։ Այդ փո-
շին կարելի չէ ավելի լավ տեսնել, հատկա-
պես արև ժամանակ, յերբ նրա ճառագայթ-
ները լուսամուտի կամ դրան փեղկից ներս
են թափանցում սենյակը։

Պարզ է, վոր այդպիսի կեղտոտ սենյակի
ողում շատ հաճախ գտնվում են նաև միլիո-
նավոր միկրոբներ, վորոնց սովորական
աչքով չի կարելի տեսնել։ Այդ միկրոբները

յերևում են միայն մի քանի հազար անգամ
մեծացրած հատուկ գործիքի՝ միկրոսկոպի
միջոցով։ Այդ միկրոբների մեջ լինում են
նաև այնպիսիները, վորոնք վանագան հի-
վանդություններ են առաջ բերում։ Փոշու
մեջ հաճախ գտնվում են տուբերկուլյոզի
կամ թոքախտի միկրոբներ։ Ավելի քան
վատ է ազդում յերեխաների վրա այդպի-
սի կեղտոտ և փոշոտ ողբ։ Գեղձախտը, վո-
րով յերեխաները հաճախ են հիվանդանում,
առաջանում է տուբերկուլյոզի միկրոբների
վարակումից։ Այդ միկրոբները յերկար ա-
միսների ընթացքում ապրում են չորացած
խորխում, տարածվում են բնակարանի փո-
շոտ ողի մեջ և մարդկանց շնչառության
ժամանակ թոքերն են գնում։

Նեղ, կեղտոտ բնակարանն առանձնապես
շատ վատ է ազդում փոքր յերեխաների ա-
ռողջության վրա այն դեպքում, յեթե այդ
բնակարանը քիչ է լուսավորված, յեթե լու-
սամուտները փոքր են և քիչ։ Այդպիսի
բնակարաններում արևի ճառագայթները
թույլ են թափանցում։ Ծծկեր և մեկ տա-
րեկանից ավելի յերեխաները հիվանդանում
են ռախիտով, կամ, ինչպես ասում են՝
անգլիական հիվանդութամբ։

Այդ հիվանդությամբ հիվանդացող յերեխաների վոսկորները յերկար ժամանակ մնում են փափուկ, կրճիկային վիճակում, ինչպես նորածին յերեխաների մոտ: Նրանց վոսկրներում յերկար ժամանակ կրային նյութեր չեն կուտակվում, վորը վոսկրների ամրությունն է տալիս: Այդպիսի յերեխաները յերկար ժամանակ չեն կարողանում քայլել: Նրանց վոտքերը ծովում են, կըրծոսկրն աննորմալ ձև է ընդունում: Իսկ յեթե ռախիտով հիվանդ յերեխաներին պահեն մաքուր ոգում, արևի տակ, նրանք արագ կերպով սկսում են կազդուրվել:

Նեղ, կեղտոտ բնակարանում սովորաբար առաջանում են պարագիտ միջատներ — տարականներ, փայտոջիւններ, վոջիւններ, լվեր, վորոնք վնասում են մարդկանց:

Շորի վոջիւր, ինչպես հայտնի յե, հանդիսանում է բծավոր տիֆի տարածման պատճառ:

Մի շարք ուրիշ հիվանդություններ, գրլափորապես յերեխաների վարակիչ հիվանդություններ, ինչպիսին է կարմրուկը, քուրեշը, զիֆտերիան նույնպես լայն կերպով տարածվում են կեղտոտ բնակարաններում:

II. ԻՆՉՊԵՍ ՊԱՋԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Թեև կոլխոզներում արդեն սկսվում է զարգանալ նոր բնակարանային շինարարությունը, բայց և այնպես կոլխոզների ճնշող մեծամասնությունն առայժմս ապրում են խրճիթներում, վորոնք կառուցվել են մենատնտեսության պայմաններում: Սովորաբար այն ժամանակները միայն գյուղի կուլակներն էյին իրենց համար ավելի ընդարձակ բնակարաններ կառուցում, իսկ չքավորներն ու միջակ գյուղացիներն ունեյին շատ նեղ և վատ կառուցված բնակարաններ:

Յուրաքանչյուր տնտեսություն, յուրաքանչյուր ընտանիք ձգտել է ունենալ և՛ իր խրճիթը խոհանոցով, և՛ իր առանձին գոմն անասունների համար: Այդ բոլորը պահանջել են նրանից շատ մեծ ծախքեր, բայց հնարավորություն չունենալով, աշխատավոր գյուղացիությունը հարկադրված՝ ի վնաս իր առողջության՝ նեղ զրության մեջ է ապրել: Ճարահատյալ նա բնակացել, վարժվել է նեղվածության և վերջինիս հետևանքների — անմաքրության ու կեղտի հետ:

Միջին չափի գյուղական բնակարանն ունի 6—7 մետր յերկարություն և 6 մետր լայնք, այսինքն՝ նրա տարածությունը միջին հաշվով հավասար է 40 քառակուսի մետրի։ Վառարանը, կերակուր յեփելու համար պլիտան, միջնորմը (պերեգորոտկա) բռնում են այդ տարածության մոտավորապես քառորդ մասը, այնպես վոր բնակարանի ոգտակար տարածության համար մնում է միայն յերեսուն քառակուսի մետր։ Յեթե մի բոլի համաձայնվենք, վոր ընտանիքը բաղկացած է 4—5 մարդուց, այն ժամանակ ամեն մեկ մարդուն ընկնում է 6—7 քառ. մետր տարածություն, իսկ մեծ ընտանիքներում էլ ավելի քիչ։

Առողջապահական տեսակետից, վորպես նորմա, յուրաքանչյուր մարդ պետք է ունենա վոչ պակաս, քան ութ և մեկ քառորդ քառակուսի մետր տարածություն։

Սովորաբար գյուղական բնակարանները կառուցվել են վոչ այնքան բարձր՝ միջին հաշվով $2\frac{1}{2}$ մետր բարձրությամբ։ 6—7 քառակուսի մետր տարածության ժամանակ ամեն մեկ մարդուն հասնում է մոտավորապես 15 խորանարդ մետր ոդ։ Բայց այդ շատ քիչ է, վորովհետև բնակարանում

մարդկանց անհրաժեշտ նորման համարվում է 30 խորանարդ մետր ոդ, իսկ յերեխաներինը՝ 20։

Գյուղական նեղվածք բնակարաններում գոլորշիացումից ոդն արագ էերպով կեղտոտվում է։ Առանձնապես ավելի շատ է կեղտոտվում այն բնակարանի ոդը, վորտեղ վառարան կա։ Վառարանի վրա կերակուր յեփելու կամ հաց թխելու ժամանակ հոտը բռնում է ամբողջ բնակարանը։ Չուրը և կերակուրը հաճախ թափթփվում են վառարանի կամ պլիտայի վրա և անմիջապես գոլորշիանալով բնակարանը լցնում են անդուրեկան հոտով։ Բացի այդ՝ պլիտայի վրա հաճախ թուջե ամանով ջուր են դնում, վորն ավելի շուտ է գոլորշիանում։

Բնակարանը հատկապես գոլորշիով լցվում է այն ժամանակ, յերբ լվացք են անում և հետո ել չորացնում սպիտակեղենը։ Շատ գոլորշի յե առաջանում նաև այն շորերից, կոշիկներից, վոտքի փաթաթաններից, վորոնք անձրևից, ձնից հետո չորացնում են վառարանի կամ պլիտայի վրա։ Սյգպիսի բնակարաններում ոդը ծայրաստիճան խոնավ է լինում։ Այդ բանը նկատելի յե այն ժամանակ, յերբ ձմեռը սենյակի դուռը բա-

ցելիս, կարծես սենյակն ե ներս խուժում
գոլորշու մի ամպ: Դա բացատրվում է նը-
րանով, վոր բնակարանը ներս մտած ցուրտ
ողը պաղեցնում է անտեսանելի ջրային
գոլորշիներին, վորոնք պտտվում են սենյա-
կի ողում: Սառելով, նրանք թանձրանում և
տեսանելի յեն գառնում:

Բնակարանում մշտապես կուտակվող գո-
լորշուց խոնավություն է առաջանում:
Առանձնապես խոնավանում է սենյակի պա-
տի ներքևի մասը, վորտեղ ողը ցուրտ է:
Թացությունն ավելի աչքի յե ընկնում վա-
ռարանից հեռու գտնվող սենյակի ան-
կյուններում: Խոնավ պատերն սկսում են
բորբոսնել և սենյակի ողից, բոլոր իրե-
րից և շորերից վատ, անախորժ հոտ է
գալիս:

Խոնավությունը առողջության համար
շատ վնասակար է: Խոնավ ողում միշտ շատ
միկրոբներ են լինում, վորոնք հիվանդու-
թյունների պատճառ են դառնում: Խոնավ,
ցուրտ բնակարաններում մարդիկ հաճախ
պաղ են առնում և տառապում են հոգերի
ցավով, ռեվմատիզմով: Զարգանում են նաև
թոքերի, յերիկամուկների և ուրիշ հիվան-
դություններ: Խոնավությունը գլխավորա-

պես ազդում է յերեխաների առողջության
վրա:

Յերբեմն բնակարանի ողը թունավորվում
է ծխից և անխնայությ: Ձմեռ ժամանակ
շատ անգամ աշխատում են պահպանել տա-
քությունը: Դեռ մինչև հիմա յել պահպան-
ված է այն հին սխալ առածը, թե «գոլոր-
շուց վոսկորներ չի ջարդվի»: Բնակարանում
ավելի շատ տաքություն պահելու ցանկու-
թյունը վոչ միայն վնաս է բերում առողջու-
թյանը, այլ և ուղղակի դժբախտություն:
Ձմեռ ժամանակ թե մեծերը և թե փոքրերը
անխահեղձ են լինում (ուգար):

Ածխահոտն առաջանում է այն դեպքում,
յերբ ծամանակից առաջ փակում են վառա-
րանի ծխնելույզը, յերբ վառելիքը, ինչպես
հարկն է, դեռ չի անխաղճ և բոցերի մեջ
կապույտ գույն է նկատվում: Վառելիքի
վոչ լրիվ այրման պատճառով առաջանում
է հատուկ թունավոր մի գազ, այսպես
կոչված՝ ածխահոտային գազը: Այդ գազը
շատ վնասակար է կյանքի և առողջության
համար: Ներշնչելիս այդ գազը մեծ քանա-
կությամբ թոքերի միջոցով անցնում է ար-
յան մեջ և մահացու կերպով թունավոր-
ում է որդանիզմը: Իսկ յեթե անխահոտն

ուժեղ չե, բայց հաճախակի յե կրկնվում,
ապա դրանից ել առաջանում են արյան
պակասություն և ջղերի քայքայում: Այս
յերեվոյթը հաճախ պատահում ե այն կա-
նանց հետ, վորոնք տնտեսուհիներ են և
յիրենց որը յերկար ժամանակ անց են կաց-
նում վառարանի մոտ:

Վատառողջ ողը բնակելի շենքերում լի-
նում ե հատկապես առավոտները, վորով-
հետե գիշերները մարդկանց արտաշնչումից
և զանազան հոտերից վարակվում ե ողը:

Տեղ տեղ դեռ պահպանվել են այնպիսի
վատ սովորություններ, վորտեղ ձմեռը բը-
նակելի շենքերում պահում են մանր անա-
սուններ՝ գառներ, հորթեր, խոճկորներ և
այլ տնային թռչուններ: Այդ կենդանիները
կեղտոտում են բնակարանը և վերջնականա-
պես ապականում առանց այն ել կեղտոտ ողը:

ԽՍՀՄ-ի տափաստանային մասում,
նույն թվում նաև մեր յերկրամասում, բը-
նակարանները սովորաբար հողե հատակ
ունեյին: Փայտի պակասության և թանգու-
թյան հետևանքով միայն կուլակներն եյին
կարողանում իրենց բնակարանների հատա-
կը տախտակել, իսկ չքավորների և միջակ-
ների համար այդ անմատչելի յեր:

Սովորաբար հողե հատակները սվաղում
են կավով, վորի հետ խառնում են նաև
գոմաղբ՝ ամուր լինելու համար:

Այդ խառնուրդը չափազանց վնասակար ե,
վորովհետե գոմաղբից առաջանում ե վատ,
անխորժ մի գազ (որինակ ամիակ) և փը-
շացնում ե բնակարանի ողը: Ամիակը մի
այնպիսի գազ ե, վորը գոյանում ե մեզի
նեխումից: Այդ գազն անդուրեկան հոտ
ունի և մշտական ներշնչելիս՝ վատ ե ազ-
դում առողջության վրա:

Հողե հատակը վնաս ե առողջության հա-
մար նաև այն պատճառով, վոր շատ փոշի
յե առաջացնում:

Հողե կեղտոտ հատակների վրա շատ
միկրոբներ են կուտակվում: Հայտնի յե, վոր
մի քանի այդպիսի դեպքերում հատակները
նպաստում են յերեխաների մեջ վարակիչ
հիվանդություն—գիֆտերիա տարածվելուն:

Յերբեմն մի քանի տներում, հատկապես
քարե հիմք ունեցող փայտե տներում, հա-
տակների տակ նկուղներ են լինում: Այդ
նկուղների մուտքը, վորն անմիջապես բաց-
վում ե հատակից, պինդ փակվում ե հա-
տուկ դռնակով: Յեթե նկուղում կամ մա-
ռանում կարող եյն զգուշացնել, թթու



դրած կաղամբ, վարունգ և այլ մթերքներ են պահվում, ապա նրանցից առաջացած գոլորշին հատակի ճեղքերից թափանցում է սենյակը և վարակում ողբ:

Միանգամայն վատ է ազդում առողջության վրա նաև սենյակի լույսի պակասությունը:

Դեռ վոչ բոլոր կոլխոզներն են գնահատում արևի լույսի խոշոր նշանակությունն առողջության համար:

Արևի լույսը վոչ միայն ամրապնդում է մեր առողջությունը, այլև վոչնչացնում է զանազան միկրոբների, վորոնք վարակիչ հիվանդություններ են տարածում:

Արևի լույսն անհրաժեշտ է հատկապես յերեխաների համար, վորոնք առանց լույսի վատառողջ և գունատ են լինում, ինչպես բույսն ստվերում:

Շատ անգամ գյուղերում առանձնապես ծղոտից շինված տների լուսամուտներն այնքան փոքր են լինում, վորոնցից շատ քիչ լույս է թափանցում: Այդ լուսամուտների ապակիները յերկար ժամանակ չեն լվացվում, փոշոտվում են, պատում են ճանճերի ծերտով, և առանց այն ել այդ ապակիներից ներս թափանցող արևի թույլ

լույսն զգալիորեն կրճատվում է: Հաճախ լուսամուտներում դնում են ամեն տեսակի տնային իրեր, ծաղկամաններ, կախում են վարադույրներ, իսկ դրանից ել բնակարանը կիսամթնում է:

Պատահում է նաև, վոր տունը չնայած շատ լուսամուտներ ունի, բայց բնակիչները դիտավորյալ կերպով չեն լուսավորում: Ձմեռ ժամանակ լուսամուտները շատ անգամ ծածկում են փեղկերով, վորպեսզի ցուրտ չփչի և թողնում են միայն մեկ լուսամուտ: Իսկ ամառը, առավել ևս, ծածկում են բոլոր փեղկերը, վորպեսզի ազատվեն «ճանճերից և արևից»: Ճանճերից պետք է պահպանվել, բայց վոչ այդ ձևով: Իսկ բնակարանն արևից զրկել, այդ նշանակում է թե իր առողջությանը և թե բնակարանին փաս հասցնել:

Բնակարանների անբարեկարգությունը և նրանց փառակար ազդեցությունն առողջության վրա ուժեղանում է ևս նրանով, վոր ինչպես հարկն է, բնակարանը չի մաքրվում և չի համաքվում: Նույնիսկ մի քանիսն են իրենց հին, անմիտ սովորության համաձայն, տարվա ընթացքում, սենյակը միայն 3—4 անգամ են հավաքում, կարգի բերում,

համարելով, վոր սա նույնիսկ բավական ե, իսկ մնացած ժամանակ կարելի չե կեղտի մեջ նստել: Սովորաբար հատակը մաքրում են չոր ավելով, դրանից ել փոշին բարձրանում ե վերև և նստում ե բոլոր առարկաների վրա:

Վոստախնը, վորի վրա կուտակվում ե փոշին, նույնպես հաճախակի չի մաքրվում: Մահճակալների, յերկար նստարանների, սեղանների տակ յերբեմն պահվում են ամեն տեսակի խլամ՝ հին փալատներ, հին կոշիկներ, թաղյակներ (վալենկա) և այլն: Նրանց տակ նույնպես շատ փոշի յե կուտակվում, վորը նպաստում ե ոգի կեղտոտելուն:

Անկողինը նույնպես պատշաճ մաքրության մեջ չի պահվում: Շատ անգամ շորերով և կոշիկներով պառկում են անկողնում և կեղտոտում: Անկողինը մեկ-մեկ պետք ե դրսում թափ տար: Նրա մեջ հավաքված փոշին և քրտինքի հոտը ծանրացնում են բնակարանի ոդը:

Մի քանի տներում թեև կան մաքուր մահճակալներ, բայց «խնայում են» գործածելու և քնում են հատակին, արկղի, նստարանների վրա, չեն ոգտագործում վերմակը և բարձերը, վորոնք շատ անգամ կուտակ-

ված են մահճակալի վրա, հասնելով մինչև առաստաղը:

Բնակարանի համար հատուկ չարիք են հանդիսանում պարագիտ—միջատ փայտոջիւնեքը, լվերը, տարականները և ճանճերը: Այդ միջատները վնասակար են առողջությանը և յերբեմն վարակիչ հիվանդությունների փոխադրման պատճառ են դառնում: Փայտոջիւներն ու լվերը թույլ չեն տալիս որվա աշխատանքից հոգնած աշխատավորին լավ հանգստանալու, նպաստում են մարմինը քորելուն, իսկ դա կարող ե, մի շարք դեպքերում, թարախոտ ուռեցք առաջացնել:

Փայտոջիւները սովորաբար բուռն են դնում մահճակալի, կահկարասիքի, պատերի ճեղքերում և ալյն, լվերն ել առավելապես, սպրում են հատակի վրա: Նրանք գլխավորապես շատ են լինում այնտեղ, վորտեղ կուտակված փոշի կա, վորտեղ հողե հատակը կեղտոտ ե և վորտեղ մոտիկ գտնվող սնային կենդանիներ և թռչուններ կան:

Տարականները, վորոնք սնվում են կերակրի ամեն տեսակի փշրանքներից և թափթրփուկներից, բազմանում են այն դեպքում, յերբ սենյակը մաքուր չի հավաքվում, գլխավորապես, յերբ գիշերը հատակի, սե-

ղանի վրա թողնում են հացի փշրանքներ
կամ յերբ կեղտոտ ամանեղենը կերակրի
մնացորդով մնում է առանց հավաքելու։
Ճանձերը բազմանում են բնակարանի, ա-
ռանձնապես բակերի և փողոցների կեղտո-
տության անբարեկարգ լինելու հետևանքով։

Կեղտոտ բնակարաններում, յերբ այնտեղ
հատկապես հացահատիկ, ձավար, ալյուր և
այլ մթերքներ են պահվում, նույնպես բազ-
մանում են առնետներ և մկներ։ Նրանք
փչացնում են իրերը, մեծ քանակությամբ
ուտում են մթերքներ, վորով և տնտեսու-
թյանը ահագին վնաս են տալիս։ Մկները և
առնետները կեղտոտում են բնակարանի
ոգն իրենց կղկղանքով և վերջինիս միջոցով
եղ աղտոտում են ուտելիքը։ Այդպիսի աղտո-
տումը կարող է մի քանի վարակիչ հիվան-
դությունների տարածման պատճառ դառ-
նալ, ինչպես, որինակ՝ պարատիֆի։

Առնետները հաճախ վարակված են լինում
առանձնահատուկ մանրիկ թելանման վոր-
դերով։ Խոզերը շատ անգամ առնետներին
ուտելով վարակվում են թելանման վորդե-
րով կամ տրիխինայով և այդպիսի խոզերի
միսը մարդու առողջության համար վտան-
գավոր է դառնում։

III. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՀՎՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱԿԵՐԸ ՅԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Կոլխոզային բնակչության առողջության
վրա ազդում է վոչ միայն բնակարանը,
այլ և բակն ու փողոցը։ Բնակարանը չի կա-
րող մաքուր և առողջ դրության մեջ գտնի-
վել, յեթե բակը և փողոցը կեղտոտ են ու
անբարեկարգ։ Իսկ փողոցների կեղտոտու-
թյունը կախված է կանոնավոր ճանապարհ-
ների բացակայությունից և փողոցները սա-
լահաառնված չլինելուց։

Դեռ բազմաթիվ գյուղերում և ստանի-
ցաներում բակերը շատ թերություններ
ունեն, վորոնք ազդում են բնակչության
առողջության վրա։

Բակերը բոլորից շատ ապականվում են
գոմաղբով։ Այդ գոմաղբը ձյան հալիցի և
անձրևային ջրերի հետ փողոց են հոսում,
կեղտոտում են հողը և մոտակա ջրհորները։
Ամառ ժամանակ, կուտակված գոմաղբի
վրա հավաքվում են ճանձերը և այնտեղ ել
դնում են իրենց ձվերը։

Բակերի աղտոտությունն առաջանում է
նաև արտաքնոցներ չլինելու պատճառով։
Շատ հազվագյուտ դեպքերում է, վոր այս

կամ լսյն բակն արտաքնոց ունի և այն ել
այնքան կեղտոտ ե, վոր հաճախ վարակի
տարածման պատճառ ե դառնում:

Շատ անգամ արտաքնոցի փոխարեն «կեղ-
տոտում են» մարագը, գոմը կամ մի վորևե
մութ փողոց և այսպիսով բակը միշտ ել
կեղտոտվում ե կղկղանքներով: Անձրևի ջը-
րերը և ձյան հալելոցները սրբում տանում
են իրենց հետ այդ կղկղանքները: Ներծծվե-
լով՝ նրանք կեղտոտում են հողը և հոսում
են իրենց կամ հարևանների բակերում
գտնվող ջրհորները:

Բակը կեղտոտվում ե նույնպես ամեն տե-
սակի պինդ և հեղուկ թափթփուկներից:
Աղբը, կերակրի մնացորդները հաճախ շպրո-
տում են բակի հեռավոր անկյունը, ցան-
կապատի տակ, մոլախոտերի մեջ կամ շտապ
կարգով փորված մի ինչ վոր փոս: Հեղուկ
տափանքները և կեղտաջրերը հաճախ դուրս
են ժայթքում ուղղակի բակում, նախաշեմ-
քի մոտ:

Այդ բոլոր ամուր և հեղուկ տափանքները
կեղտոտում են հողը, փտում են և նպաս-
տում միլիոնավոր ճանճերի բազմանալուն:
Մարդիկ հաճախ զարմանում են, թե ամառ
ժամանակ վնասեղից են այդքան ճանճերը:

Նրանք ամեն տեղ թափանցում են, խմբերով
հարձակվում են մթերքների վրա, աներեսի
պես ուղղակի բերան են մտնում և թույլ չեն
տալիս քնելու: Ամառը ճանճերից խուսափե-
լու համար ամուր կերպով փակում են լուսա-
մուտքների փեղկերը, բայց դա ել չի ոգնում:

Ճանճերը և նրանց բազմաթիվ սերունդ-
ները չեն կարող առանց սննդի ապրել և բազ-
մաճալ, իսկ այդպիսի սնունդ հանդիսանում
են կեղտաջրերը, տափանքները, կղկղանք-
ները և գոմաղբը, վորոնց պատճառով բակում
շատ առատությամբ ճանճեր են վիտում:

Կղկղանքներում շատ հաճախ գտնվում են
ամեն տեսակի վարակիչ միկրոբներ, գլխա-
վորապես վորովայնի տիֆի, դիզենտերիայի
(արյունալուծություն) և ստամոքսային ամեն
տեսակի սուր խանգարումներ: Ճանճերը
նստելով կղկղանքների, տափանքների, գո-
մաղբի վրա, իրենց մարմնով, թևերով և
թաթիկներով տարածում են վարակը: Նստե-
լով հացի և ուրիշ ամեն տեսակի սննդային
մթերքների և ամանեղենի վրա, ճանճերը
վարակում են նրանց և այդպիսով տարա-
ծում են վարակիչ հիվանդություններ:

Վորդերի ձվիկները, վորոնք գտնվում են
կղկղանքների մեջ, անձրևային և ձյան հալը-

լոցի միջոցով տարվում են և զանազան միկրոօրգանիզմներին հետ միասին կեղտոտում ջրհորի ջուրը: Այդպիսի ճանապարհով ել տակաճրներին, կղկղանքների և գոմաղբի մեջ գտնվող վարակիչ միկրոօրգանիզմները՝ ճանճերի, ջրի և փոշու միջոցով անցնում են մարդու օրգանիզմը և վարակիչ հիվանդություններ առաջացնում:

Հազվագյուտ չե, փոր ամեն տեսակի տակաճրներով, անպետք բաներով կեղտոտում են փոշ միայն բակերը, այլ և փողոցները: Այդ են թափում փողոցները, լվացքաջուր են լցնում ուղղակի ճանապարհի վրա, շարտում են փոքր կենդանիների և թռչունների դիակներ և այլն: Այս բոլորը փտում, քայքայվում, վարակում են ողբ և անձրևի ջրով ու ձյան հալնլոցով տարվելով ապականում են հողն ու ջրհորները:

Մի քանի դյուրեղում և ստանիցաներում գոյություն ունի մի այսպիսի սովորություն — գարնանը և աշնանը փողոցի մեկ կողմից միայն անցնելու համար զոմաղբ են փռում, փորն ել ավելի կեղտոտում և փողոցը:

Յերբեմն սատկած կենդանուն ուղղակի թաղում են բակում, փորպեսզի նրան հեռու

տեղ չտանեն և ազատվեն յերկար գլխացավանքից: Յեթե կենդանին սատկել և վարակիչ հիվանդություններով, ասենք սիբիրախտով, այն ժամանակ բակում թաղելը կարող է նպաստել վարակի տարածմանը: Հազվագյուտ չե, յերբ շները ճանկրտում են փոսերը և այնտեղից լեշեր հանում: Յեվ նույնիսկ այն ժամանակ, յերբ այդ չի պատահում, դիակների այդպիսի թաղումը հողը շատ է կեղտոտում:

Բակերում և փողոցներում յերբեմն մեծ ջրափոսեր են լինում, վորոնց մեջ գտնված ցեխն անգամ ամենաշոգ յեղանակներին ել չի չորանում: Այդ ջրափոսերն առաջանում են գետնի խորդուբորդ լինելուց, վորտեղ և հավաքվում են անձրևային ջրերը: Այդպիսի փոսերի մեջ յերկար ժամանակ մնացած և հոտած ջուրը նույնպես վարակում է ողբ և համաճարակի տարածման պատճառ դառնում: Այդպիսի փոսերում շատ անգամ մալարեայի մոծակները դնում են իրենց ձվիկները: Զրատար խողովակների տակ յերկար ժամանակով դրված են լինում տակառներ, վորոնց միջի ջուրը հոտում է և այստեղ ևս սկսում են բազմանալ մալարեայի մոծակների թրթուրները:

IV. ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԻՄԱՆԱ ԿՈՆԽՈՋՆԻԿԸ, ԻՐ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՌՈՂՋԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բոլորից առաջ հարկավոր ե հոգալ, վոր
ընակարանի ողբ միշտ մաքուր լինի: Նույնիսկ
ամենափոքր, նեղվածք սենյակում հնարավոր
ե ողբ թարմացնել, յեթե ձմեռ և ամառ ժա-
մանակ ամեն որ սենյակը ողափոխել:

Բնակարանի ողբ թարմացնելու համար,
պետք ե ողանցք ունենալ: Յուրաքանչյուր
կոլխոզային տուն պետք ե ողանցք ունենալ:
Յեթե տունը բաղկացած ե վոչ թե մեկ, այլ
2 — 3 սենյակից, ապա յուրաքանչյուր սեն-
յակ իր ողանցքը պետք ե ունենալ:

Ողանցք շինելը հնարագիտություն և մեծ
ծախսեր չի պահանջում, իսկ նրա տված
ոգուտը հսկայական ե առողջությանը:

Որվա ընթացքում պետք ե ողանցքը մի
քանի անգամ բացել, առաջին հերթին ի հար-
կե, առավոտյան, յերբ սենյակի ողբ հատկա-
պես ծանր ե: Սենյակի փոշին մաքրելու ժա-
մանակ անհրաժեշտ ե ողանցքը բացել:

Քնելուց առաջ շատ ոգտակար ե ողանցքը
բացել և թարմացնել սենյակի ողբ: Շատ
մարդիկ սովոր են քնել ողանցքը բաց սեն-
յակում, վորից ել ամրապնդվում ե նրանց

առողջությունը: Հիվանդանոցներից շատե-
րում թոքախտավորների համար նույնպես
բացում են նրանց ննջարանների ողանցք-
ները, և դա շատ ոգտակար ե նրանց առող-
ջության համար:

Հարկավոր ե հիշել, վոր ողանցք շինելը
յեկ հաճախ ողափոխելը հանդիսանում ե
կոլխոզային բնակարանների առողջացման
առաջին պայմանը:

Ձմեռ ժամանակ, վառարաններն այնպես
պիտի վառել, վոր ածխահոտ չլինի: Կանո-
նավոր վառելը բոլորից առաջ կախված ե
վառարանը սարքին լինելուց: Հավ ողահա-
նություն լինելու և վառարանը ծուխ չա-
նելու համար, պետք ե հետևել, վորպեսզի
ծխնելույզները և ծխանցքը մուր չպատեն:
Հարկավոր ե տարվա ընթացքում մի քանի
անգամ ծխնելույզների մուրը մաքրել:

Վառարանը վառելու ժամանակ անհրաժեշտ
ե ողանցքը բացել: Շնորհիվ ներս խուժած
սառ ողբ, և՛ վառարանն ե վառվում և՛ ծուխ
չի լինում:

Հատկապես լավ ուշադրություն պիտի
դարձնել վառարանին, վոր մինչև վառելանյու-
թի ածխանալը ծխնելույզը չփակել, այլապես
ածխահեղձ կարելի չե լինել: Քանի դեռ ածխի

բոցերի մեջ նկատվում են կապույտ կրակներ, ծխնելույզը փակել չի կարելի:

Պետք է խուսափել տանը վաքք անելուց: Տարվա տաք յեղանակներին կարելի չէ վաքք անել բակում, սրահում և այլն: Իսկ ձմեռը կարելի չէ վաքք անել մի վորևե կողաշենքում կամ սպիտակեղեն լվանալու և չորացնելու ամառվա խոհանոցում, յեթե այդպիսին կա:

Իսկ անհրաժեշտության դեպքում, յերբ վաքքը կատարվում է բնակարանում, պետք է այնքան զգույշ լինել, վոր շատ ջուր չլթափթփվի: Լվաքքի ժամանակ պետք է ողանցքը միշտ բաց թողնել, վորպեսզի բնակարանում կուտակված գոլորշին դուրս գնա, այլապես շենքը կարող է խոնավանալ: Ընդհանրապես խորհուրդ չի տրվում սենյակում շորեր չորացնել: Ամեն մի տան մեջ այդ նպատակով կարելի է ոգտագործել չարգախը, կամ թե սրահը, մարագը և այլն: Կոլխոզային բաղնիս կառուցելիս պետք է նրան կից՝ վաքքի և սպիտակեղեն չորացնելու համար առանձին շենք կառուցել:

Բնակարանի ողը ծանրանում է հատկապես յերեխաների բարուրներ չորացնելիս: Զի կարելի չերբեք յերեխաների թրջված

բարուրները չորացնել առանց լվանալու: Հարկավոր է անպայման առաջուց լվանալ և ապա չորացնել, այն ել վոչ բնակարանում:

Յեթե ընտանիքում կա ծծկեր յերեխա, անհրաժեշտ է միշտ հետևել նրա անկողնի մաքրությանը, վորովհետև սնկաղինը մեզից թրջվելով սկսում է փտել և ուժեղ կերպով կեղտոտել ողը: Փոքր յերեխաներին մաքրության մեջ պահեն անհրաժեշտ է վոչ միայն իրենց՝ յերեխաների առողջության համար, այլ և բնակարանի և ողի մաքրության համար:

Շատ ուժեղ կերպով ողն աղականվում է նաև կեղտոտ սպիտակեղենից: Դրա համար վաքքի համար հավաքված կեղտոտ սպիտակեղենը փոխանակ սենյակում պահելու, պետք է պահել խորդանոցում ամուր կափարիչ ունեցող արկղի մեջ:

Կերակուր յեփելիս ծխից, գոլորշուց, մխահոտից շատ ուժեղ կերպով կեղտոտվում է ողը: Դրանից ամբողջապես կարելի չէ խուսափել այն ժամանակ, յերբ կոլխոզում հասարակական սնունդը լավ է կազմակերպված: Յեթե լավ հասարակական ճաշարան է կառուցված, վորտեղ բոլոր կոլխոզնիկները կարող են ճաշել, այն դեպքում տնային յեփել-

Թափելու անհրաժեշտութիւնն չի լինի, հետեւապես և բնակարանը չի կեղտոտվի:

Վերցնենք որինակի համար, մեր յերկրամասի Մեչետինսկի ռայոնի Վոյկովի անվան կոլխոզը: Այդ կոլխոզում կա մաքուր, լավ կառուցված ճաշարան, վորտեղ ճաշում են բոլոր կոլխոզնիկները և նրանց բնակարանները նախանձելի մաքրութիւն ունեն: Այնտեղ համարյա չես գտնի վոչ պտուկներ, վոչ կաթսաներ, վոչ թասեր, վոչ գավաթներ, վոչ ել դուլներ: Այնտեղ ծուխումուր չկա և խոհանոցից ազատագրված կանայք ել ավելի հանգիստ են ապրում: Հետևապես, կոլխոզում լավ հասարակական սննդի կազմակերպութիւնը նպաստում է յուրաքանչյուր բնակարանի մաքրության պահպանությանը և նրա առողջացմանը:

Այն դեպքում, յերբ կերակուրն աշուտամենայնիվ յեփվելու յե տանը, պետք է աշխատել, վորպեսդի, վորքան հնարավոր է, ծուխ և ածխահոտ քիչ լինի: Պետք է հետեւել, վորպեսդի կիրակուրը չթափվի պլիտայի վրա, և պուտուկների, կաթսաների և թավաների տակից չկպչի: Կերակուրը յեփելուց հետո հարկավոր է անպայման սենյակի ոդանցքը բացել և թարմացնել ոդը:

Կերակուր պատրաստելու ժամանակ միշտ ել հավաքվում են ամեն տեսակի տականքներ և կեղտաջրեր: Կարիք չկա այդ տականքները բնակարանում հավաքել և պահել, այլ հարկավոր է անմիջապես սենյակից դուրս տանել: Դուլում հավաքված ջուրը և կեղտաջուրը հարկավոր է պահել նախասենյակում:

Բնակարանը առողջ լինելու համար, անհրաժեշտ է միշտ մաքուր և հավաքված պահել: Մաքրելու ամենահասարակ յեղանակը՝ հատակն ավելն է: Վոչ մի դեպքում չպետք է չոր ավելով մաքրել սենյակի հատակը, վորովհետև փոշի յե բարձրանում է նստում է բոլոր առարկաների վրա: Նախ քան ավելը, պետք է անպայման ավելը թրջել կամ հատակին ջուր ցրցնել:

Յեթե բնակարանի հատակը փայտից է շինված, այն ժամանակ ավելի լավ է ամեն օր ջրով լվանալ: Հատակը լվանալուց հետո, պետք է ոդանցքը բացել, վորպեսդի չորացող հատակից բարձրացող գոլորշին դուրս գնալ:

Իսկ յեթե հատակը հողից է, այն ժամանակ գետինը սվաղելու դեպքում կարիք չկա կավի հետ գոմաղը շաղախել, վորովհետև գոմաղը ուժեղ կերպով փչացնում է ոդը: Գոմաղրի փոխարեն կաֆե, ամրացնելու հա-

մար, կարելի չե վորոշ չափով կիր ավելաց-
ներ: Իսկ ամենալավը, այդ դարմանն է: Հա-
կավոր ե վերցնել մի մեծ կաթսա, մեջը
ջուր և դարման լցնել և յեփացնել մի
քանի ժամ: Հետո դարմանի ջուրը քամել
և այդ ջրով կավը շաղախել և սվաղել հողե
հատակը: Դարմանի յեփած ջուրն իր մեջ
պարունակում ե հատուկ սոսնձային նյու-
թեր, վորոնք չեն թողնում կավը ճաքճքելու:
Այդպիսով կարելի ե ազատվել գոմաղբից,
վորը փչացնում ե սենյակի ողը: Բացի հա-
տակից՝ փոշին նստում ե նաև բնակարա-
նում գտնված բոլոր առարկաների վրա՝ սե-
ղանի, նստարանի, պահարանի, լուսամուտի
գոգին և այլն: Անհրաժեշտ ե այդ փոշին
հնարավորության սահմաններում շուտ-շուտ
մաքրել, լավ ե, իհարկե, յեթե ամեն ու-
ր մաքրվի: Փոշին պետք ե մաքրել անպայման
թաց շորով:

Պետք ե նկատի ունենալ, վոր առանձնա-
պես շատ փոշի յե հավաքվում ձեռք չհաս-
նող տեղերում՝ պահարանի գլխին, պատկեր-
ների, լուսանկարների շրջանակների հետևի,
անկյուններում և այլն: Դրա համար ել սեն-
յակն ամեն ուր մաքրելու ժամանակ անհրա-
ժեշտ ե չմոռանալ և այդ տեղերի փոշին

թաց շորով սրբել: Սենյակում իրերը պետք
ե պնդես դասավորել, վոր վոչ մի խորշ
և դժվարամատչելի անկյուն չմնա, վորով-
հետև նման տեղերում փոշին ավելի շատ ե
հավաքվում և այնտեղ բոլորից դժվար ե
լինում մաքրել: Պետք ե հիշել, վոր այդ-
պիսի խորշերում հաճախ խոնավություն և
բորբոս ե առաջանում՝ ող չխաղալու պատ-
ճառով: Կարիք չկա մահճակալների, սեղան-
ների և նստարանների տակ, արկղների և
պահարանների հետևում ամեն տեսակի խլամ՝
մաշված շորեր, կոշիկեղեն պահել, վորովհետև
նրանց մեջ փոշի ու խոնավություն ե հա-
վաքվում: Նրանք սկսում են փտել և փչաց-
նել սենյակի ողը:

Անհրաժեշտ ե հատկապես հետևել, վոր-
պեսզի մահճակալի տակ միանգամայն չոր և
մաքուր լինի, հակառակ դեպքում, քնած ժա-
մանակ, ստիպված կլինեն ծանր ող շնչել:

Ամեն տեսակի հին իրերի, հին կոշիկների,
թաղիքների, վոտքի փաթաթանների և այլի-
համար, պետք ե հատուկ տեղ հատկացվի,
կամ նախասենյակում, կամ մառանում և կամ
խորդանոցում:

Հակառուողապահական ե, յերբ բնակա-
րանում մաքրում կամ թափ են տալիս շո-

երբը: Այդ բանը կարելի յե անել նախասեն-
յակում կամ թե դռանը:

Շատ փոշի յե կուտակվում նաև ախ սեն-
յակներում, վորտեղ սարդի վոստայներ կան.
դրա համար անհրաժեշտ ե վոստայները
տասը որը մեկ անգամ մաքրել: Վոստայնը
պետք ե սրբել հատուկ խողանակով կամ
իւն մաքուր ավելի վրա փաթաթած թաց
շորով, վորպեսզի փոշին սենյակում չտա-
րածվի:

Յուրաքանչյուր կոլխոզնիկ, վորը ցանկա-
նում ե մաքուր ապրել, պետք ե հրաժարվի
հատակի վրա թքելու սովորությունից, ինչ-
պես հասարակական տեղերում, այնպել ել
սեփական տանը: Պետք ե հիշել, վոր խորխի
և թքի մեջ հաճախ շատ վարակիչ հիվան-
դությունների բացիլներ են լինում, հատկա-
պես թոքախտի, նրանք կարող են ամիսնե-
րով ապրել չորացած խորխում: Իսկ չորա-
ցած խորխը փոշի դառնալով տարածվում ե
ողի մեջ և մարդիկ շնչում են այն:

Հասակավոր մարդկանց այդ տգեղ սովո-
րությունը՝ թքել և խխել հատակին, ուժեղ
կերպով ազդում ե յերեխաների վրա: Նրանք
հաճախ չորթաթ են անում, կեղտոտում են
ձեռքերը, հատակից վերցնելով սննդի թափ-

թփուկները բերանն են տանում և վարակ-
վում են զանազան հիվանդություններով:

Յեթե տանը ծխող մարդ կա, նա պետք ե
իմանա, վոր ծխախոտի ծուխը ուժեղ կեր-
պով թունավորում ե բնակարանի ողը և
շատ վատ ազդեցություն ունենում մեծերի
ու յերեխաների վրա: Դրա համար ել սե-
նյակում չպետք ե ծխել, հատկապես քնելուց
առաջ, յերբ քնող մարդու համար մաքուր
ողը շատ անհրաժեշտ ե: Յուրաքանչյուր
ծխող պետք ե դուրս գա նախասենյակը կամ
միջանցքը, վորպեսզի չկեղտոտի սենյակի
ողը, վորը շնչում ե թե ինքը և թե իր ըն-
տանիքը:

Կոլխոզային բնակարանի առողջացման գոր-
ծում առանձնապես ուշադրություց պետք ե
դարձնել օնկոդիցների մաքրության վրա:

Բոլորից առաջ անհրաժեշտ ե շորերը հա-
նած քնել: Շորերով քնելը շատ վնաս ե առող-
ջությանը, վորովհետև հազուստը սեղմում ե
արյան շրջանառությունը, իսկ շորերի գոլոր-
շին և փոշին, ընդհանրապես, վնաս ե շնչառու-
թյան համար:

Ամեն մի կոլխոզական ընտանիք պետք ե
ուշենա սավաններ, բարձի յերեսներ և վեր-
մակներ, վորովհետև դրանք անհրաժեշտ են



առողջ քնի համար: Մուշտակով, վոշխար-
ների քո ըքով և արտաքին հագուստով ծածկ-
վելի շատ վնասակար ե առողջությանը:

Անկողնու սարքը (սավաններ և բարձեր)
պետք ե ամիսը 2—3 անգամ փոխել: Կա-
րիք չկա ցերեկ ժամանակ շորերով և կոշիկ-
ներով պառկել կամ նստել մահճակալի վրա:
Առանձնապես հարկավոր ե արգելել ոտար
մարդկանց:

Ամիսը վոշ պակաս քան 3 անգամ ան-
կողնու սարքը մի քանի ժամով պետք ե դուրս
հանել, հովհարել, ու նրա մեջ հավաքված
փոշին փայտով թափ տալ: Անկողիններին
հովհարելն անհրաժեշտ ե հատկապես նրա
համար, վոր նրանց մեջ հավաքվում են մարդ-
կային մարմնի գոլորշին և բրտինքը, վորը
փչացնում ե բնակարանի ողը:

Բնակարանը մաքուր պահելու համար, փո-
ղոցից և բակից ցեխ չպետք ե ներս բերել, հա-
կապես գարնանը և աշնանը: Վոտքերի ցեխը
մաքրելու համար անհրաժեշտ ե դրան մուտքի
առաջ պնել յերկաթե քերիչ կամ ճարման-
դիկ, և բացի այդ, դռան առաջ գտնված շորի
կամ խսիրի վրա վոտքերը շատ լավ սրբել:

Բնակարանը բացի ամեն որ մաքրելուց,
անհրաժեշտ ե տարվա մեջ մի քանի անգամ

հիմնական հավաքում կատարել: Այդ հավա-
քումի ժամանակ պետք ե պատերը և առաս-
տաղն սպիտակացնել, սրբել բոլոր անկյուռ-
ների և խորշերի փոշին, բալոր սեղանները,
տաքուղեականները, դարակները լվանալ ոճա-
ռով և տաք ջրով կամ մոխրաջրով և ողա-
փոխել ամբողջ բնակարանը:

Բնակարանն առողջացնելու համար, պետք
ե հոգ տանել, վորպեսզի շատ արևի լույս
ներս թափանցի: Պետք ե հետևել, վոր լու-
սամուտների ապակիները մաքուր լինեն, դրա
համար ել շաբաթը՝ կամ տասն ոըը մեկ
անգամ դրսի և ներսի ապակիները սրբել
թաց և մաքուր չոր շորով:

Լուսամուտի գոգի վրա կարիք չկա ուրիշ
առարկաններ և ծաղկամաններ դնել: Ավելի
լավ ե ծաղիկները դնել հատուկ պատվան-
դանների վրա, վորպեսզի նրանցով լույսի
առաջը չփակվի: Լուսամուտի փեղկերն ինչ-
պես ձմեռը, այնպես ել ամառը, պետք ե
միշտ բաց լինեն: Կարիք չկա նույնպես մեծ
վարագույրներ կախել, վորովհետև նրանք
ուժեղ կերպով ծածկում են լույսը, և բացի
այդ՝ նրանց մեջ միշտ ել փոշի յե հավաքվում:

Յերեկոներն, իհարկե, ելեկտրական լույսը
հանդիսանում ե ամենաառողջական: Ելեկ-

տրականութիւնը տալիս է հալածար և ուժեղ լույս, ծուխ չի սնում, չի փչացնում ողը, և հրդեհի տեսակետից ել անվտանգ եւ Արդեն շատ կոլխոզներ իրենց համար ելեկտրական լույս են բերել:

Նավթի լամպով ոգտովելիս պետք է հետեւել, վորպեսզի նա ծուխ չսնի, ամեն որ պատրույգից այրուքը կտրել և շատ լավ սրբել լամպի ապակին: Կարիք չկա պատրույգն այնքան խորը քաշել, վոր լամպը աղոտ լույս տա, վորովհետեւ դա ուժեղ կերպով աղտոտում է ողը: Գլխավորապէս այդ չափոյի անել քնելուց առաջ: Ավելի լավ է սովորել մթության մեջ քնել և անհրաժեշտության դեպքում ձեռքի տակ լուցկի ունենալ:

Մաքուր, առողջ բնակարանում բնակարանային պարագիտներ բոլորովին չպետք է լինեն — փայտոջիններ, լվեր, տարականներ, ձանձներ, նույնպէս մկներ ու առնետներ:

Վորպեսզի բնակարանում փայտոջիններ առաջ չգան, պետք է անկողինները շուտ-շուտ և լավ հովհարել: Ամիսը 2—3 անգամ յեռացրած ջրով մահճակալները խաշել և յերկաթե մահճակալների խորշերը, ցանցն այրել պրիմուսով կամ գոդալամպով: Մահճակալների և ցանցի յուրաքանչյուր խորշը,

վորտեղ փայտոջիններ են առաջ գալիս, պետք է քսել կարբու (5% լուծույթ), նավթ, բեէկն (սկիպիդար), քացախահյութ կամ հատուկ հեղուկ՝ այսպէս կոչվող «վոչնչացնող» (խտրեբիտել), վորը ծախվում է դեղատներում և կոտպերատիֆներում:

Լվերը վոչնչացնելու համար անհրաժեշտ է խնամքով սրբել փոշին, հատակը հաճախ լվանալ, բնակարանում տնային կենդանիներ չթողնել, մուշտակով և վոչխարի քուրքով չծածկվել:

Վորպեսզի բնակարանում փայտոջին չգոյանա, պետք է կերակուր ուտելուց հետո հատակը շատ լավ սրբել, և հատկապէս՝ քնելուց առաջ վոչ մի տեղ փշրանքներ ցրի՛վ չտալ, ուտելու մթերքներն ամուր ծածկել, սեղանի վրա և պահարանում կերակրոտ և կեղտոտ ամանեղեն չթողնել: Ամանները ուտելուց անմիջապէս հետո պետք է տաք ջրով լվանալ, չորացնել ու դարսել պահարանում:

Իսկ յեթե բնակարանում տարականներ են առաջ յեկել, նրանց կարելի չէ վոչնչացնել բորաթթուով: Վերցնել մեկ թեյի գդալ բորաթթու, մի քիչ շաքարի կամ մեղրի հետ լուծել մեկ բաժակ յեռացրած ջրի մեջ, և

ապա սառած լուծույթում թրջել մի կտոր հաց և դնել այն տեղերում, վորտեղ տարականներ են գտնվում:

Տարականներն ուժեղ կերպով վոջնչանում են այն կերակրից, վորը պատրաստված է հատուկ նյութերից՝ չորս մասը վերցնում են սիսեոի ալյուր, մեկ մասը բորաթթու և մեկ մասը մանր ծեծած շաքար: Այդ խառնուրդին ավելացնում են նաև մի քիչ ճարպ (ճրագու կամ յուղ): Այդ շիլայի նման կերակուրը պետք է դնել բնակարանի այն խոռոչների մեջ, վորտեղ տարականներ կան և նրանք ուտելով կվոջնչանան:

Ճանճերի հետ պայքարելու համար նույնպես անհրաժեշտ է սննդային մթերքների և ամանեղենների հետ վարվել ամենախիստ ճշտապահությամբ, իսկ ամենազխավորը՝ բակերը և փողոցները պահել շատ մաքուր վիճակում:

Բնակարանում ճանճերը վոջնչացնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները — բնակարանը միջանցուկ քամու միջոցով ողափոխել և դնել «կաշուն» թուղթ, վորը պատրաստված է հասարակ ձևով. վերցնում են 3 մաս գերչակաձեթ (կոստորկի) և 6 մաս կոլոփոն (կանիֆոլի), տաքացնում և

խառնում են իրար, վորից հետո ավելացնում են նաև մեկ մաս մեղր:

Այդպիսի թղթեր վաճառվում են: Կարելի է նաև ափսեների մեջ կաթ լցնել, վորը մեկ շիշ կաթի մեջ խառնված է մեկ թեյի գդալ ֆորմալին և մի քիչ ել շաքար: Ամառ ժամանակ հարկավոր է լուսամուտները ծածկել կամ մետաղյա ցանցով կամ թանգիվով:

Բնակարանում առնետներ ու մկներ չառաջանալու համար տան մեջ չպետք է պահել հատիկային մթերքներ, ձավար, ալյուր և այլն: Մեծ քանակությամբ առնետներ և մկներ հայտնվելու դեպքում, նրանց պետք է թունավորել: Թունավորումը կատարվում է ածխաթթվային բարիումով պատրաստված հրապուրիչ գնդիկների միջոցով: Ամեն մեկ գնդիկն իր մեջ պարունակում է 0,2 գրամ ածխաթթվային բարիում: Ածխաթթվային բարիումը համ ու հոտ չունենալով տնային կենդանիները հեշտությամբ կարող են ուտել այդ գնդիկները, ուստի հարկավոր է նրանց այնպիսի տեղ դնել, վորպեսզի նրանք չկարողանան ուտել: Առնետները և մկներն ածխաթթվային բարիումից պատրաստված կերակուրն ուտելով 2—4 օր հետո

սատկում են: Թունավորված առնետները և մկները ջրի խիստ կարիք են զգում, դրա համար ել թողնելով բնակարանը հեռանում և սատկում են ուրիշ տեղեր: Կոլխոզները կարող են ածխաթթվային բարիութիւն գնդիկներ ստանալ Պաշը-Ավիաբիմի, ռայոդբաժնի կազմակերպությունից կամ գյուղատնտեսից:

Վ. ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ ԲԱԿԵՐԸ ՅԵՎ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՌՈՂՋԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կոլխոզնիկներն ունեն կովեր, խոզեր, տնային թռչուններ: Ամեն մի կոլխոզնիկ, վորը ցանկանում է մաքուր բակ, հետևապես և մաքուր բնակարան ունենալ, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բակը գոմաղբով չկեղտոտվի: Դրա համար ել պետք է մի այնպիսի տեղ պատրաստել, վորպեսզի գոմաղբը նրա մեջ կուտակել, կամ ինչպես ասում են կոմպոստի (պարարտաղբ) փոս քանդել:

Այդ կոմպոստի փոսը պետք է քանդել անմիջապես գոմի մոտ, և ինչքան հնարավոր է ջրհորից հեռու, յեթե իրոք բակում ջրհոր կա: Փոսի թե ներսի պատերը և թե հատակը սվաղվում է կավի շերտով: Գոմից

զեպի փոսն անասունների մեզի համար առու անցկացնել: Փոսը շտրվում է քարերով, իսկ վերևից ծածկվում է տախտակով:

Գոմաղբի պահելու տեղը պետք է ստվերոտ լինի: Ամեն ուր գոմաղբը պետք է գոմից դուրս տանել: Փոսի մեջ զտնված աղբը շուտ շուտ յեղանով պիտի խառնել, վորպեսզի այնտեղ ճանձները ձվեր չդնեն: Փոսը գոմաղբով լցվելուց հետո հարկավոր է անմիջապես դատարկել:

Մեր յերկրամասում անասնաաղբից սովորաբար «տարթ» կամ «աթար» են պատրաստում վառելու համար: Ավելի լավ է, այդ աթարը պատրաստել վոչ թե ամեն մի բակում, այլ այնտեղ, վորտեղ կոլխոզի վարչությունը բոլորի համար տեղ կհատկացնի: Ինչ կասկած, վոր այդ բանը զգալի չափով կնպաստի յուրաքանչյուր կոլխոզային բակի առողջացմանը: Իսկ հետագայում աթարը պատրաստելու և չորացնելու համար կարելի յե բերել և դարսել իր մարագում:

Ամեն մի կոլխոզնիկ իր բակում պէտք է արտաբնակ ունենա: Այդպիսի արտաբնակ իրենից ներկայացնում է 2 — 3 մետր խորություն ունեցող մի փոս, վորի վրա դրնում են փայտե շարժական բուդկա (տնակ),

Փոսը քանդում են բնակարանից հեռու մի խուլ անկյունում և լցվելու դեպքում ծածկում են հողով, իսկ բուրգի տեղափոխում են մեկ ուրիշ տեղ ու դնում են նոր քանդած փոսի վրա:

Այդպիսի արտաքնոցը պետք է ամուր ծածկվող դուռ ունենա և հարկավոր է հետեւել, վոր նա միշտ ծածկված լինի: Պատերը պետք է ճեղքեր չունենան: Նստատեղիի անցքը հարկավոր է միշտ ծածկել ամուր կափարիչով: Այդ բոլորն արվում է նրա համար, վոր ճանճերը չկարողանան մտնել արտաքնոցի փոսի մեջ և ձվեր ածեն:

Արտաքնոցը պետք է միշտ մաքուր լինի: Հատակը և նստատեղին հարկավոր է ջրով լվանալ: Ժամանակ առ ժամանակ փոսի մեջ պետք է լցնել չմաքրած սև կարբոլ կամ կիր ցանել:

Բացի կոմպոստից (գոմաղբի փոս) և արտաքնոցից, կոլխոզնիկը պետք է նաև հոգ տանի, վոր բակը չկեղտոտվի լվացֆաջրից յեվ ամեն սեսակի սափանցներից: Պետք է մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ լվացքաջուրը զետնին շաղ տալու սովորությանը: Տականքները, լվացքաջուրը և այլն, պետք է լցնել արտաքնոցը կամ կոմպոստի մեջ:

Աղբի և ամեն տեսակի տականքների համար, բակում, արտաքնոցի մոտ հարկավոր է աղբի արկղ դնել: Արկղը պետք է շինել շատ ամուր տախտակներից, առանց ճեղքերի և կիպ ծածկվող կափարիչով:

Աղբի արկղը ներսի կողմից պետք է լավ կալրել, իսկ կափարիչը միշտ ծածկված պահել: Հենց վոր արկղը լցվի, պետք է անմիջապես դատարկել և տանել թափել աղբանոցը:

Լավ շինված և կարգին դրության մեջ պահված գոմաղբի փոսը, արտաքնոցը և աղբի արկղը ոժանդակում են ճանճերի դեմ մղած պայքարին, վորոնք չեն կարող չափից դուրս բազմանալ, հետեաքար և անհամեմատ քիչ կլինեն բնակարանում:

Բակը մաքուր պահելու համար, հարկավոր է, վորպեսզի գետինը հարթ լինի, առանց փոսերի և խորդ ու բորդությունների: Յեթե բակում հողե թմբեր կամ անհարթություններ կան, պետք է քանդել և հավասարեցնել:

Առողջության համար մեծ նշանակություն ունի նաև ծառատունկը: Ծառերը շատ մեծ ոգուտ են տալիս, ինչպես, որինակ՝ մաքրում են ոգը, չորացնում են ճահճային տեղերը, հրդեհի ժամանակ պաշտպանում են կրակից և այլն:

Յեթե շատ մեծ բաղ է, ապա առաջին հերթին հարկավոր է իմանալ, թե նրա վոր մասը կարելի չե ոգտագործել տնտեսական կարիքների համար: Բակի այն մասը, վորը չի ոգտագործվում վառելիք դարսելու, անց ու դարձ անելու և տնտեսական ուրիշ պահանջների համար, կարելի չե դարձնել ծառեր տնկելու, ծաղկանոցի, մացառուտների տեղ:

Ծաղկանոցը, ծառերի ու թփուտների տրնկման տեղը պետք է բավականաչափ արևոտ լինի: Մտվերոտ տեղերում բույսերը չեն աճում և ընդհակառակը նպաստում են բակի խոնավությանը:

Ծառեր տնկելու ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ծառերը հետագայում ստվեր չզցեն տան լուսամուտներին և չխանգարեն արևի ճառագայթներին լուսավորելու տան պատերը և պատերի մոտ գտնված հողամասը: Ծառերը պետք է տնկել այնպիսի հեռավորությամբ, վոր արևն իր ամենաբարձր կետում լուսավորի տան մոտ գտնված հողամասը վոչ պակաս, քան $1\frac{1}{2}$ մետր տարածությամբ. յեթե ծառերը տնկեն անմիջապես պատերի և լուսամուտների մոտ, այն ժամանակ տունը մութ կլինի և մռայլ:

Իսկ յերբ ծառերը մեծանան և ճյուղեր արձակեն, պատերը կսկսեն խոնավանալ և կտուրը կսկսի փչանալ:

Բակը կանաչադարձելու համար, պետք է տնտիջապես տան մոտ խոտ և ծաղիկներ ցանել, հետո թփուտներ և նոր միայն ծառեր տնկել: Ծառատնկումը պետք է կատարել կամ աշնանը, յերբ տերևները թափվում են, կամ թե գարնանը՝ մինչև բողբոջելը: Ծառերը պետք է իրարից $1\frac{1}{2}$ — 2 մետր հեռավորության վրա գտնվեն:

Բնակարանը և բակը մաքուր դրության մեջ պահելու համար, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև փողոցների մաքրությանը:

Բոլորից առաջ հարկավոր է փողոցում գտնված փոսերը և անպետք առուները լցնել և հավասարեցնել, վորպեսզի անձրևից հետո հոտած ջրով և թանձր ցեխով լճակներ չգոյանան, վորովհետև այդպիսի լճակները կարող են մալարիայի մոծակների համար բազմացման ոջախ հանդիսանալ: Ավելի խոր ընկած փոսերի և հեղեղատների վրա, վորոնք արգելք են հանդիսանում յերթևեկությանը, պետք է փոքրիկ կամուրջ կառուցել և հետևել, վոր նրանք սարքին լինեն:

Անհրաժեշտ է խիստ կերպով արգելել փողոցը գոմաղը, մոխիր, լվացքաջուր, տնային մանր կենդանիների և թռչունների դիակներ շարժելը: Ճանապարհը սարքի բերելու համար կարիք չկա ցեխ ժամանակ փողոցում գոմաղը լցնել, վորովհետև գետինը շատ է կեղտոտվում: Ամեն տեսակի տականքներ և կեղտոտություններ դուրս տանելու համար գյուղխորհուրդը կոլխոզից 1 կիլոմետր հեռավորության վրա, դաշտում, պետք է հատուկ տեղ հատկացնի:

Այս տեղն էլ հենց կոլխոզի համար դառնում է ընդհանուր աղբանոց: Աղբանոցը պետք է լինի կամ հարթ տեղում, կամ փոսի մեջ, կամ թե ձորակում, վորը վոչ մի կապ չունի գետի, լճի, ավազանի հետ, վորոնք հոսում են կոլխոզի միջով:

Պարզ է, վոր գարնանային անձրևային ջրերը և ձյան հալչոցները չեն կարող այդպիսի աղբանոցներից իրենց հետ ջրամբարները տանել զանազան տականքներ: Աղբանոցի տեղը վորոշելիս, պետք է նույնպես նկատի ունենալ, թե քամիները հաճախ վորտեղից են փչում դեպի գյուղը և աղբանոցի համար ընտրել քամուն բոլորովին հակառակ մի տեղ:

Սատկած անասուններին թաղելու համար

հարկավոր է մի հատուկ տեղ հատկացնել, վոր կոչվում է անասունների գերեզմանոց: Անասնագերեզմանոցի համար պետք է ընտրել այնպիսի մի տեղ, ինչպիսին վոր աղբանոցն է: Սատկած անասունը պետք է անասնագերեզմանոցը տանել սայլով: Վոչ մի դեպքում չի թույլատրվում փողոցով դիակը քարշ տալ: Սատկած կենդանիներ թաղելու փոսը պետք է ունենա մեկ մետր խորութուն, իսկ ավելի լավ է $1\frac{1}{2}$ — 2 մետր, վորպեսզի շները չկարողանան հանել և քարշ տալ լեշը: Սատկած կենդանիների փոսի մեջ պետք է լցնել կիր կամ նավթ, ձյութ, չմաքրված կարբոլ, հատկապես վարակիչ հիվանդություններից սատկոտելու ժամանակ (սիրիրախտ և այլն):

Կոլխոզի թե առողջությունը և թե բարեկարգությունը պահանջում է զարգացնել կանաչադարձում: Այդ կանաչադարձումը հսկայական ոգուտներ է տալիս, որինակ՝ կոլխոզին պաշտպանում է փոշուց և քամիներից, մաքրում է ողը, չորացնում է հողը և հրդեհների առաջանալուն խոչընդոտ է հանդիսանում:

Ցեթե կոլխոզում կանաչներ չկան, կամ քիչ են, այն ժամանակ հարկավոր է զբաղ

վել ծառեր տնկելով: Փողոցների յերկարությամբ ծառերը պետք է տնկել տներից 7 մետր հեռավորության վրա, իսկ տներին առաջ հարկավոր է ծաղկանոց անել:

Ավելի լավ է փողոցի աջ ու ձախ կողմերում ծառերը յերկշարք տնկել, վորպեսզի ստվերանիստ ծառուղիներ առաջանան: Յածր ճահճային տեղերում ավելի լավ է ուռիներ տնկել, իսկ ավելի չոր տեղում կաղամախի (բարաի), ալացիա, լորի, ծփի, թղկի և այլն:

Յեթե կոլխոզում ազատ և մեծ տարածություն կա, պետք է ծառեր տնկել, ծաղկանոց անել և ցանկապատել՝ տնային կենդանիներ ներս չմտնելու համար: Այսպիսով կարելի չէ լավ կոլխոզային պարտեզի կամ գրոսապուրակի հիմք դնել:

Կոլխոզի բարեկարգության բոլոր աշխատանքների ընթացքում, բոլոր կոլխոզնիկներն ամենայեռանդուն մասնակցություն պիտի ցույց տան: Կոլխոզային ակտիվ առողջապահական հանձնաժողովի գլխավորությամբ, պետք է մշտապես հսկի, վորպեսզի կոլխոզի փողոցներում և բակերում լիակատար մաքրություն և կարգ լինի:

Սոցիալիստական մրցության միջոցով բնակարանները, բակերը և փողոցները բա-

րեկարգված, առողջ, կուլտուրական վիճակում պահելու գործը, պետք է յուրաքանչյուր կոլխոզ ընդգրկի: Այդ գործում պետք է մրցեն՝ բակը բակի հետ, կոլխոզը կոլխոզի հետ: Կոլխոզում գտնվող առողջապահական հանձնաժողովն այդ սոցմրցության մեջ պետք է ընդգրկի բոլոր կոլխոզնիկներին:

Միայն այսպիսի լայն ինքնագործունեյության հիման վրա, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ղեկավարությամբ կոլխոզային գյուղն արագ կերպով կդառնա մաքուր, կուլտուրական և առողջ:

ԸՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ,

Հայսճիր ֆո կարծիքն այս գրքի մասին հետեվյալ հասցեյով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.

Նամակները կառելի յե ուղարկել առանց
նամակադրումի:



Ответ. редактор А. Г. Аваков
Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание № 46/4906. Сдано в набор 9 февраля 1936 г.
Подписано в печать 25 февраля 1936 г. Формат — А6
105x148. Об'ем 1 $\frac{7}{8}$ п. л. Тираж 1000. Уполкрайлит
00-11454. Заказ 664.

Типография им. Стачки 1902 года в г. Ростове н-Д.

«Ազգային գրադարան»



NL0279349

Цена 35 коп.
Գրեւ 400.

№ 36793

3489

am

На армянском языке

ДОКТОР М. А. МЕНИХЕС

**ОЗДОРОВИМ ЖИЛИЩЕ И
ДВОР КОЛХОЗНИКА**

614
—
5.61

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д Буденновский пр. № 30

Գ Ր Ա Պ Ա Զ Ե Ս Է
Ուստոյ-Դոճ, Մոսկովիկայա, № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)